



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

05 օգոստոսի 2022 թվականի թիվ 110-Ս

ք. Երևան

«ԹԻՍ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ

ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի Հանձնաժողովն (այսուհետ՝ *Հանձնաժողով*), ուսումնասիրելով 2022 թվականի հունիսի 08-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 18 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովն՝ ի դեմս Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության 2022 թվականի ապրիլի 28-ին, *թիվ 04-379 գրությամբ* դիմել էր ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ԹԻՍ» ՓԲ ընկերությանը (այսուհետ՝ *ցանցային օպերատոր*)՝ այն խնդրանքով, որ ցանցային օպերատորը ներկայացնի իր գործունեությունը, ինչպես նաև պատասխանել, թե ո՞ր լիցենզիայի հիման վրա է ոչ գծային տեսալսողական տեղեկատվության տրամադրումը (VoD) մատուցվում՝ համաձայն «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության (լիցենզիա՝ ԿՀ N 311, տրման ամսաթիվը՝ 28.04.2021թ.) լիցենզիայի, թե՞ «ԹԻՍ» ՓԲ ընկերության (լիցենզիա՝ ԿՀ N 281, տրման ամսաթիվը՝ 13.07.2020), հարցին:

Ի պատասխան Հանձնաժողովի գրության՝ ցանցային օպերատորը ներկայացրել է հետևյալ պատասխանը.

«(...) իսկ ոչ գծային տեսալսողական տեղեկատվության տրամադրումն (VOD) իրականացվում է «Թիս» ՓԲԸ-ի կողմից. այս պահին բացառություն է կազմում «Մեր Բակը 25 Տարի անց» ֆիլմի տեղադրումը Հարթակի «Տեսավարձույթ» բաժնում, որն իրականացվում է՝ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի լիցենզիայի շրջանակներում»:

Ինչպես տեսնում ենք ցանցային օպերատորի պատասխանից՝ ոչ գծային տեսալսողական տեղեկատվության տրամադրումն իրականացվում է հենց ցանցային օպերատորին տրամադրված լիցենզիայի շրջանակներում:

Այնուհետև, Հանձնաժողովն՝ ի դեմս Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության 2022 թվականի մայիսի 18-ին, *թիվ 04-439 գրությամբ* դիմել էր ցանցային օպերատորին՝ պահանջելով ներկայացնել ոչ գծային տեսալսողական տեղեկատվության տրամադրման եղանակով հեռարձակվող «Netflix Studios» («Նեթֆլիքս

Մթուղիոս») ընկերության արտադրանք հանդիսացող՝ «La Casa de Papel» («Լա Քասա դե Փափել»), «All of us are dead» («Օլ օֆ սա ար դեդ»), «The Witcher» («Դը Վիթչեր»), «Midnight Mass» («Միդնայթ Մեսս»), «Squid Game» («Սքույադ գեյմ») և այլ ֆիլմերի վերահաղորդման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Ի պատասխան, Հանձնաժողովի 18.05.2022թ. **թիվ 04-439 գրության**, ցանցային օպերատորը ներկայացրել է հետևյալ պատասխանը.

«Ի պատասխան 18.05.2022 թ.-ի Ձեր N 04-439 գրության հայտնում ենք, որ «ԹԻՍ» ՓԲԸ-ի, ինչպես նաև իր դուստր ընկերություն հանդիսացող «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից շահագործվող «Թիմ Թիվի» (Team TV) հարթակի միջոցով ոչ գծային տեսալսողական տեղեկատվության տրամադրման եղանակով չեն ցուցադրվում/վերահաղորդվում «Netflix Studios» ընկերության արտադրանք հանդիսացող ֆիլմեր»:

Ցանցային օպերատորը, Հանձնաժողովի գրավոր հարցմանը, տվել է հստակ պատասխան, որ «Netflix Studios» ընկերության արտադրանք հանդիսացող ֆիլմեր չի ցուցադրում: Հաշվի առնելով սույն պատասխանը՝ Հանձնաժողովի համար խիստ անհասկանալի է ցանցային օպերատորի, այսպես կոչված, «ի լրումն գրությունը», որով ցանցային օպերատորը հայտնել է հետևյալը.

«Ի լրումն Ձեր N 04-439 գրությանը ի պատասխան մեր կողմից ուղղարկված N 10 գրության առ 01.06.2022 թ. տեղեկացնում ենք, որ կողմից պատասխան գրության ուղղարկման պահին «ԹԻՍ» ՓԲԸ-ի կողմից շահագործվող «Թիմ Թիվի» (Team TV) հարթակի միջոցով ոչ գծային տեսալսողական տեղեկատվության տրամադրման եղանակով ցուցադրվող/վերահաղորդվող «Netflix Studios» ընկերության արտադրանք հանդիսացող ֆիլմերն արդեն իսկ եղել են հեռացված մեր հավելվածից»:

Ցանցային օպերատորը իր երկրորդ գրությամբ փաստում է, որ ցուցադրել/վերահաղորդել է «Netflix Studios» ընկերության արտադրանք հանդիսացող ֆիլմեր, որոնք Հանձնաժողովի առաջին գրությանը պատասխանելիս **հեռացված են եղել համապատասխան հավելվածից**: Սույն մտքին զուգահեռ ցանցային օպերատորն իր գրությամբ չի պատասխանում Հանձնաժողովի կարևոր հարցմանը. չի ներկայացրել **ֆիլմերի վերահաղորդման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները**:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք) 10-րդ հոդվածի 3-րդ մասը** սահմանում է.

«Ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցանցային օպերատորն իր երկու գրություններից ոչ մեկում չի անդրադարձել վերահաղորդման իրավունքը հաստատող փաստաթղթերին, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ **ՎՀՎՎ օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով**՝ 2022 թ. հունիսի 08-ին Հանձնաժողովը ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է **թիվ 18 վարչական վարույթը**:

Հարուցված վարչական վարույթի մասին ցանցային օպերատորին ծանուցելիս՝ Հանձնաժողովը վերջինիս տեղեկացրել է բացատրություններ և պարզաբանումներ ներկայացնելու իրավունքի մասին:

24.06.2022 թվականին Հանձնաժողով է մուտքագրվել ցանցային օպերատորի գրությունը: Գրությունում մասնավորապես նշված է.

«Ի պատասխան Ձեր 10.06.22թ.-ի N 05/1-498 գրության տեղեկացնում ենք, որ նշված ֆիլմերը ցուցադրվել են կարճ ժամանակահատվածով՝ թեսթային ռեժիմով, որի վերլուծության արդյունքում նշված ֆիլմերը ցուցադրելու նպատակահարմարության բացակայության պատճառով հեռացվել են նախքան Ձեր 18.05.2022թ.-ի N 04-439 գրության ստանալը»:

Անդրադառնալով ցանցային օպերատորի բացատրություններին և պարզաբանումներին՝ Հանձնաժողովը ցանակնում է արձանագրել հետևյալը.

1. Ցանցային օպերատորն ընդունել է այն փաստը, որ ցուցադրել է վերոնշյալ ֆիլմերը,
2. Օրենքով նախատեսված չէ պայմանական ժամանակով, թեսթային ռեժիմով կամ որևէ հիմքով՝ առանց ցուցադրության իրավունքները հավաստող պայմանագրի որևէ տեսալսողական արտադրանքի ցուցադրություն:

Համադրելով ցանցային օպերատորի կողմից տրված այս երկու պատասխանները՝ Հանձնաժողովն արձանագրում է այն հակասությունը, որը տեսնում է նշյալ մտքերում: Այսպես, ցանցային օպերատորն առաջին գրությունում կատեգորիկ ձևակերպմամբ փաստում է, որ չեն ցուցադրվել վերոնշյալ ֆիլմերը, մինչ դեռ պարզաբանումներ ներկայացնելիս տալիս է լրիվ այլ պատասխան՝ հղում անելով նրան, որ մինչև գրություն ստանալը վերջիններս արդեն իսկ հեռացված են եղել: Օրենքի **10-րդ հոդվածի 3-րդ մասը** հստակ և աներկբա սահմանում է, որ *«ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում»:* Օրենքը նշյալ իրավական հարաբերությունները կարգավորելու իմաստով որևէ բացառություն չի նախատեսել՝ կլինի թեսթային ռեժիմով, ժամանակավոր, թե՛ մեկ այլ եղանակով կամ նպատակով: Ցանցային օպերատորի պատասխանից նաև բացահայտվում է, որ վերջինս, ֆիլմերը ցուցադրելու ժամանակ, չի ունեցել հեռարձակման իրավունքը հավաստող որևէ փաստաթուղթ:

Համադրելով փաստերը պարզ է դառնում, որ գործ ունենք ֆիլմերն առանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության ցուցադրության Օրենքի խախտման հետ, և այս պարագայում առկա է նաև «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների» մասին օրենքով (այսուհետ՝ **ՀԻՀԻ օրենք**) պաշտպանվող տեսալսողական ստեղծագործությունների նկատմամբ իրավատիրոջ ունեցած հեղինակային իրավունքների խախտում, քանի որ ցանցային օպերատորի կողմից նշված ֆիլմերը՝ ոչ գծային տեսալսողական տեղեկատվության տրամադրումն առաջարկվել է առանց Իրավատիրոջ հետ պայմանագիր կնքելու:

Այսպիսով, բացի վերը նշված բացատրությունից, վարչական վարույթի եզրափակիչ փուլում ցանցային օպերատորի կողմից ներկայացվել է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր բացատրություն այն մասին, որ իրավախախտումը վերացված է, ինչի հիման վրա վերջինիս առաջարկվել է «**Վարչական իրավախախտումների վերաբերյալ**» **ՀՀ օրենսգրքի** (այսուհետ՝ **ՎԻՎՕ**) համաձայն դիտարկել որպես մեղմացնող հանգամանք:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Հանձնաժողովի **2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 204-Ա** որոշմամբ ցանցային օպերատորին տրվել է ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություն:

Օրենքի **2-րդ հոդվածի 1-ին մասը** սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Տեսալսողական մեդիայի մասին», «Ձանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի **53-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը** սահմանում են.

«3. Առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակում են իրականացնում ոչ գծային Հեռարձակողները, որոնք գործունեություն են իրականացնում կարգավորող պետական մարմնի սահմանած կարգով գործունեությունը թույլատրող որոշումն ստանալուց հետո:

4. Կարգավորող պետական մարմնի՝ գործունեությունը թույլատրող որոշումն ստանալուց հետո ոչ գծային Հեռարձակողները կարող են պայմանագրային հիմունքներով գործունեություն իրականացնել ցանցային օպերատորների և այլ հաղորդակցության ցանցերով:»:

Հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 18-ի «Ոչ գծային Հեռարձակողների կողմից առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալու կարգը սահմանելու մասին» **թիվ 160-Ա** որոշմամբ հաստատված **N 1 հավելվածի 4-րդ կետը** սահմանում է.

«Հանձնաժողովի՝ գործունեությունը թույլատրող որոշումը ստանալուց հետո ոչ գծային Հեռարձակողները կարող են պայմանագրային հիմունքներով գործունեություն իրականացնել ցանցային օպերատորների և այլ հաղորդակցության ցանցերով:»:

ՀԻՀԻ օրենքի **3-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» կետի** համաձայն՝ *Հեղինակային իրավունքի օբյեկտներ են՝*

«տեսալսողական ստեղծագործությունները (կինո-հեռուստաֆիլմերը, անիմացիոն և մուլտիպլիկացիոն կինոնկարները, կարճ երաժշտական տեսահոլովակները, գովազդային, փաստագրական, փաստավավերագրական և այլ ֆիլմերը):»:

ՀԻՀԻ օրենքի **39-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝ *այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով, այսուհետ՝ իրավատեր) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:*

ՀԻՀԻ օրենքի **65-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝ *սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավաստիրոջ թույլտվությունը:*

Ստեղծագործության էական մաս է համարվում ստեղծագործության որևէ մասը, որը տվյալ ստեղծագործությանը ծանոթ ցանկացած անձ ինքնուրույն կարող է նույնականացնել որպես այդ ստեղծագործության մաս:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացրած փաստերը, որի արդյունքում հայտնի է դարձել, որ ցանցային օպերատորը չունենալով խնդրո առարկա հանդիսացող ֆիլմերի Իրավաստիրոջ թույլտվությունն առանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի, ոչ գծային տեսալսողական տեղեկատվության տրամադրմամբ, բաժանորդներին առաջարկել է հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող ֆիլմերը՝ խախտելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջը:

Հանձնաժողովն ամրագրում է, որ լիցենզիա ստացած ցանցային օպերատորը Հանձնաժողովի կողմից ստանալով առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլատրող որոշումը, պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Ցանցային օպերատորը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում ցանցային օպերատորը պարտավոր էր պահպանել տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող իրավական պահանջները:

Փաստորեն, ցանցային օպերատորը, **2022 թվականի հունիսի 24-ին Հանձնաժողովին մուտքագրված գրությամբ**, ընդունել է այն փաստը, որ առանց հեղինակային Իրավաստիրոջ իր տեսադարանում ներառել է տեսալսողական արտադրանք: Նշվածից պարզ է դառնում, որ ցանցային օպերատորը իր տեսադարանում ֆիլմեր ներառելիս չի նույնականացնում դրանց արտադրողի տվյալները, ինչն իր հերթին ենթադրում է, որ ցանցային օպերատորը հեղինակային իրավունքի խախտումով ցուցադրվել վարչական վարույթի ընթացքում քննարկվող տեսալսողական ատադրանքները:

ՎԻՎՕ-ի **33-րդ հոդվածը սահմանում է.**

«վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1)մեղավորի անկեղծ գոջումը.

2)իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

3) իրավախախտում կատարելը հոգեկան խիստ հուզմունքի ազդեցության տակ կամ էլ անձնական կամ ընտանեկան ծանր հանգամանքների զուգադիպությամբ:

4) իրավախախտում կատարելը անչափահասի կողմից:

5) իրավախախտում կատարելը հղի կնոջ կամ մինչև մեկ տարեկան երեխա ունեցող կնոջ կողմից:

ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձր) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք չեն նշված օրենսդրության մեջ»:

Խիստ կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ սույն վարչական վարույթի շրջանակներում արդեն իսկ նախատեսված է մեղմ պատիժ՝ **գրավոր նախազգուշացում**, ինչպես նաև, անդրադառնալով ցանցային օպերատարի խնդրանքին, կարճել վարչական վարույթը՝ Հանձնաժողովը ցանկանում է արձանագրել, որ

Օրենքի **32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի** համաձայն՝ «կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ»:

Օրենքի **55-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝ «կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում»:

Օրենքի **56-րդ հոդվածի 1-ին մասը** սահմանում է.

«Սույն **օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ»:**

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 53-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 56-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին»

օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. «ԹԻՄ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վարչական տույժը՝ գրավոր նախազգուշացում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԹԻՄ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏՍԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

05 օգոստոսի 2022թ.

ք. Երևան